



# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

ARCHBISHOP TORKOM MANOOGIAN, PRIMATE

Թիւ 27291

Ապրիլ 25, 1981

Արժանաշնորհ  
Տ. Յուսիկ Բնյ. Նշանեան  
Առժամեայ Հովիւ Ս. Խաչ Եկեղեցւոյ  
Թորոնթօ.

Սիրելի Տէր Յուսիկ,

Ապրիլ 22ին ստացած ենք Ապրիլ 13, 1981 թուակիր ձեր նամակը, ուր կը տեղեկացնէք թէ Փետրուար 14ին գումարուած տարեկան անդամական ժողովի ատենագրութիւնները եւ պահանջուած միւս տեղեկութիւնները աւելի կանուխ դրկել կարելի չեղաւ:

Յիշեալ տեղեկագիրները ստանալէ ետք Առաջնորդարանի վարիչ Տիար ֆրանք Սթոնսըն հեռաձայնով տեղեկացուցած է ձխական Խորհուրդիդ Ատենապետին որ Թեմական Խորհուրդը որոշած է չվաւերացնել ձխական Խորհուրդներու անդամոց ընտրութիւնը մինչեւ որ վճարուին համայնքի տարետուրքերը:

Այսու գիրով կը հրահանգենք որ անմիջապէս համայնքիդ յետեալ տարետուրքերը --1980 տարուան հաշւոյն 4,560 տուար եւ 1981 տարուան հաշւոյն 1,824 տուար-- Առաջնորդարանի անուան գրուած փոխգիրով մը յանձնուին Թորոնթոյի մէջ Հոգ. Տ. Եղիշէ Ժ. Վրդ. Կիզիրեանի, որպէս զի ան այդ գումարը փոխանցէ Գանատիրն Իմփիրերը Պանք Ավ Գամբրսի մօտ Առաջնորդարանի անունով բացուած հաշիւին:

Համեցէք անմիջապէս գրաւոր կերպով մեզի տեղեկացնել որ վերոյիշեալ փոխգիրը յանձնուած է Հոգ. Տ. Եղիշէ Ժ. Վրդ. Կիզիրեանի՝ որպէս զի վաւերացնենք ձխական Խորհուրդիդ ընտրութիւնը:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Օրինակ՝ Հոգ. Տ. Եղիշէ Ժ. Վրդ. Կիզիրեանի  
ձխական Խորհուրդի Ատենապետին

Յ. Գ. Ամերիկեան 4,560 տուարը այսօրուան սակով համարժէք է գանատիրան  
5,467 տուարի, իսկ 1,824 տուարը՝ 2,187 տուարի: